

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՓԱՂԱՓԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Հերկայ 1897 տարեշրջանի

Պոռնոգրաֆիայի համար տարեկան 10ֆր
" " 1/2 " 5 "
Արտասահմանի համար " 12 "
" " 1/2 " 6 "
Կրակի վճարելի

Համակ դրամ եռայն խրկել հետևեալ հասցեով

ԽՍԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՐԱԴԻՈՆԵՔՆԵՐ ԼՐԱԳՐՈՅ ՎԱՐՆԱ (ՊՈՒԼԿԱՐԻԱ)

Редакция на вѣстникъ

„Ирaвyнкъ“

ВАРНА (България).

Rédaction du journal

„IraVounk“

VARNA (Bulgarie)

Խմբագրության ուղղակի գրութիւնը
ետ չեն դրկուիր եւ յարմար դատ-
նաճներն միայն կը հրատարակ-
ուին անբողոքի կամ մատարի:

Յաւնոցման տողը 20 սանթիմ.
երեքէն աւելի անգամներու համար
20 առ 100 զեղը կը լինի:

ԽՍԲԱԳՐԱԿԱՆ ԱԶԴ

Ինչպէս արդէն երկիցս ծանուցինք,
Խրատունի ներկայ թիւէն սկսեալ շա-
բաթն երկու անգամ պիտի հրատա-
րակուի: Մեր թերթին նկատմամբ
ցոյց տրուած ջերմ համակրութիւնն է
միակ շարժառիթը որ մղեց մեզ այս
որոշումն ընելու, ի նկատի չառնելով
որ մեր ծախքերուն վրայ կարեւոր յա-
ւելում կը բարդուէր, ծախքեր որոնք
պիտի հաւասարակշռուին եթէ մեր ներ-
կայ բաժանորդներուն վրայ աւելնան
առնուազն հարկեր բաժանորդներ եւս
մինչեւ երկու ամիս: յոյս պայմանա-
ծառն ետք, երբ մեր յոյսն ի գերեւ-
ելայ, ահամայ պիտի ստիպուինք մեր
տարեկան բաժնեգիրներն վրայ երկու
ֆրանք աւելցնել, թերթին գոյու-
թիւնն ապահովելու համար:

Խրատունի այս նոր շրջանին առ-
թիւ հարկ դառնցինք նաեւ զօրացնել
մեր խմբագրական ուժերը: Քաջալե-
րութեան փոքր ցոյց մը բաւական է
որպէս զի թերթին պարունակութիւնն
հետզհետէ աւելի ճոխ եւ բազմապիսի
ըլլայ:

Արտասահմանի համար թղթատարա-
կան ծախքին ծանրութիւնը կը հար-
կադէ մեզ շարաթը մէկ անգամ երկու
թիւերը միանգամայն զրկել մեր արտա-
սահմանի բաժանորդներուն: Իսկ անոնք
որ կը փափաքին ամեն մէկ թիւը զատ
զատ ստանալ, պարտին մեզ գրել եւ
յանձն առնել թղթատարական ծախքին
տարբերութիւնը վճարել:

ՄԵՐ ԵՍԸ

Մեր հար որքան կը մթազնէ
մեր աչքեր ու թող չիտար որ տես-
նենք ու ըմբռնենք մեր ազգային
ամենասուրբ պարտականութիւն-
ները, որոնք ամենքիս եւ ամէն մէ-
կիս համար կը ծնին մեր արդի
լայնածաւալ աղէտներէն: ասոնք
մանաւանդ թուրքիայէն դուրս
ապրող հայութեան համար կը պա-
րունակեն շատ դասեր, զոր ան-
տես ընել եղբունգործութիւն մ'է
բարոյական՝ եւ մեծագոյն քան
պատժական օրէնքներու նախատես-
ած ամեն ոճիրներ:

Դասեր կան Հայաստանի ժո-
ղովրդին ահաւոր վիճակին մէջ,
դասեր թուրքիայէն ամեն օր
հասնող լուրերուն մէջ, դասեր՝
Եւրոպայի հայկական խնդրին հան-

դէպ լռեալ գիրքին մէջ. սակայն
մի պիտի օգտուի այդ դասերէն,
երբ մեր ժողովրդական անիծեալ
այն ախտը, եսականութիւնը, կը
հակառակի ստոր:

Ո՞վ կրնայ ուրանալ որ եթէ մեր
հար չըլլար, մեր վիշտերը ամեն
հայու միջեւ եղբայրակցութեան
նորոգոյն եւ թերեւս զօրաւորա-
գոյն կապը պիտի ըլլային, զմեզ
իրարու աւելի պիտի մօտեցնէին
եւ սրտերն ու մտքերը պիտի տրա-
մադրէին միանալու մէկ նպատակի
մը, այն է մեր բազմազմի ազգ-
պարտականութեանց գործադրու-
թեան շուրջը:

Սակայն եսականութիւնը խուլ
կը դարձնէ մեզ մեր Հայաստանի
եղբայրներուն եւ քոյրերուն աղա-
ղակներուն, կը կուրցնէ մեր աչ-
քեր, կը քարացնէ մեր սրտեր որ-
պէս զի չկարենանք թօթափել իր
լուծը ու ձեռք ձեռքի տալով գոր-
ծել համերաշխաբար եւ միացած
մեր գծադրութեանց մէջ, ու այն
վայրկեանն երբ մեր թողաւոր
արեւակիցներ սրախողխող կը նա-
հատակուին ազգութեան ու կրօնի
համար, խղճահարութիւն չենք
զգար՝ վառնայի մէջ ներքին
փրկուն խնդիրներով պառակտուե-
լու, իրարու դէմ եկրիկներ սար-
քելու՝ անխոստովանելի կիրքեր
մղուած: Վառնա գծախտաւոր
մէկն է միայն բազմութիւ օրինակ-
ներէն, որոնք չեն պակսիր նոյն
իսկ թուրքահայոց մէջ, թո՛ղ ուրիշ
տեղեր:

Թաւառանկան ամօթ մըն է այս,
եւ բարոյականութեան երեսին նե-
տուած նախատինք մը, որ իր վրէժը
պիտի պահանջէ մեզմէ ուշ թէ
կանուխ:

Կարգա՛, ընթերցող, մեր ներ-
կայ թիւին Պօլսոյ նամակին այն
մասը ուր մեր թղթակիցը կը յիշէ
իր տեսակցութիւնը Հայաստանի
որբացած պատանիի մը հետ ու
տես թէ գծախտութիւնը ինչպիսի
վիճակին մը ստեղծեր է անչա-
փահաս, պարզ, անուս որբ ու
աղքատ գաւառացիի մը սրտին
մէջ: Բաղդատէ՛ այդ վիճ պատ-
կերը-օրինակի համար-այն տիւր
տեսարանին հետ, զոր մեզ կ'ընծայեն

մեր Բարիկազական ազգակիցներուն
մէջ տիրող երկպառակութիւնները,
ու ըսէ ինձ թէ տակաւին մինչեւ
ո՛ւր պիտի տանի մեզ մեր եսա-
կանութիւնը, ո՛ւր պիտի յանգի
մեր այս ընթացք... ըսէ՛, ըսէ՛,
խնդրեմ, ըսէ՛, Աստուծոյ սիրոյն,
ո՛ւր ենք եւ ո՛ւր կերթանք...
Յ. Պ.

ԱՐԶԱԳԱՆԳ

Հմայեալ Գրիգորեան այն տաճան
եւ ութ տարեկան պատանին է զոր
անցեալ կիրակի խից տարաւ դժ-
խեմ մահը իր անյագ եւ յարատե
հնձումովը:

Տարիներ առաջ ճանչցած էի
Հմայեալը երբ տակաւին կ'աշակեր-
տէր Կ. Պօլսոյ Մէշտուտեան
վարժարանին զոր յաճախ այցելու
առի՛թն ունէի:

Իր ուսուցիչներ միշտ գովաստով
կը խօսէին վրան. եւ արդարեւ
համեստ վարքովը եւ տարապայ-
ման իմացականութեամբը մեծ ա-
պագայ ունենալ կը խոստանար:

Ետքէն կարծեմ Քատը-գիւղ
փոխադրուեցաւ ու անգամ մըն ալ
անունը չի լսեցի... Ի՞նչ կըսեմ,
գրուած տեսայ զայն թղթի մը
վրայ որ սեւ չըլնակով մը բո-
լորուած էր...

Ուսանողական բեղմնաւոր կեանք
մը անցընելէ ետքը, վառնայի մէջ
անողոք հիւանդութեան մը զոհ
կերթար գաղթական Հմայեալը:

Անակնկալ յուզիչ էր. արդեօք
անուան չփութութիւն մը կար: Եր-
բէ՛ք. ինչպէս ետքէն անձամբ ըս-
տուգեցի դառն իրողութիւնը, եւ
կեղեցի գիմելով:

Նոյն ինքն է Հմայեալը, մեծցած
երիտասարդ դարձած, նոյն ճա-
կատն է լայն զոր սեւ մազեր չը-
նորհալի կերպով կը բոլորեն. նոյն
կուսական անմեղունակ գիմա-
գծերը զոր երեքմե ճանչցած էի եւ
որոնց վրայ այժմ մահը դրած էր
իր տխուր դրոշմը...

Արցունքը ընդհանուր էր եկե-
ղեցիին մէջ: Որովհետեւ ծանօթ
կամ բարեկամ ըլլալ պէտք չէր վը-
րան գլխաւ համար, այնքան գե-
ւատի, այնքան աղւոր էր Հմայ-
եալ...

Եւ արդարեւ գարնան զարթման
մէջ, երբ ամբողջ բնութիւնը կը
խլրտէր ցնծութեամբ, արեւուն
անդրանիկ ճառագայթներէն փայ-
փայլած, խեղճ տղան արդէն
յաւիտենական քունին մէջ ընկը-
մած, ծաղիկ հասակի մէջ, սեւ
հո՛ղը գրկելու կերթար...

Եկեղեցիին մէջ, բարի հայ մը,
որուն աչքերը արտառութիւ լճակ-
ներ դարձած էին, գլուխը տըլս-
րութեամբ երեքնելով ըսաւ ինձի.

— Երանի՛ իրեն, որ գէթ այս
մահը ունեցաւ:

Կ'ակնարկէր այն հայերուն որոնք
հարկը հազարներով զոհ գացին
մեր թշնամիներուն վատ հարուած-
ներուն եւ որոնց գերեզմանները
անյայտ են, ծովուն խորերը, տե-
ղունդներու եւ փոսերու յատակնե-
րը...

Իմ կարծիքս սակայն բոլորովին
հակառակ էր անձանօթ բարի խօ-
սակցիս կարծիքէն:

* * *

Հմայեալի այս կերպով վերջա-
նալը, ըստ իս, երբէք հակակշիռ
մը չէր իր հազուագիւտ յատկու-
թիւններուն եւ բնաւ մեր վիշտը
մեղմացնելու հանգամանք չունէր:

Ընդ հակառակը:
Ես կը կածեմ թէ գծախտ է
այն հայ երիտասարդը, որ բնա-
կան մահուամբ կը մեռնի, անգործ
իր տան մէջ, սիրելիներէն չլիապա-
տուած, ողբ ու կոծերու ընկե-
րակցութեամբ...

Երջանիկն այն է որ ինքզինք
եւ իրենները պաշտպանելու համար
հրազէններու ահեղ պայթմանց,
պողպատին կատաղի շառաչիւննե-
րուն մէջանող իր հոգին կաւանդէ.
թշնամիին սոսկման ճիչերուն խառ-
նելով իր առիւծի մոնչիւնը եւ
բոլորովին գինովցած վառագիւն
կծու բուրուակէն:

Գերեզման. ի՞նչ գերեզման. հե-
րոնները անանկ բաներ չեն ունե-
նար. որովհետեւ երբէ՛ք չեն մեռ-
նիր անոնք. այլ սերունդէ սե-
րունդ կը յաւերժանան բիւրաւոր
սրտերու ամենէ՛ն նուիրական ըզ-
գացումներուն մէջ պարուրուած...

Իսկ եթէ հարկ ըլլայ, ա-
պագան ովկէաններու յատակէն

պիտի ժողովէ քաջերու և նահատակներու ոսկերութիւնը, սուրբ մասունքներու պէս, և անմահ յիշատակարաններ պիտի կանգնէ առնոց որոնք ազգին իրաւունքը պաշտպանեցին

Չէ՛, սիրելի խօսակիցս, երանի աղոնց որոնք բախտն ունին մեռնելու ինչպէս մեռան Զաքարեանցներ, Բաբկէններ, Գնունիներ, Արտաշէս Միսաքեաններ և Անդրէասեաններ - դաշտին վրայ:

Բնական մահը պառաւ կնկան մահն է:

Ահա թէ ինչու ա՛յ աւելի կը ցաւիմ հս.բու վրադ, Հմայեակ . . .

Գաւմեր-Արշաւիր

ՎԱՍՍՍ

Մարդ մը կայ որ Եւրոպայի ճիւղին վրայ նստած է գայն խեղդելու աստիճան:

Վասօս գնդապետն է աս:

Եթէ Եւրոպայի քաղաքագէտներուն ձեռքը տաս աս մարդը, բղիկ բղիկ կընեն, իրենց ակռաներով կը բրցունեն անոր կարծր միտերը: Տեսա՞ք դիւանագիտական հաշիւներ, համեմատութիւն և այլն քանդող աւերող մարդը: Երկիրս թագաւորը ուսկից գտաւ այս զարհուրելի արարածը, որ կարծես հին Սպարդաղիներուն տոեանէն մնացած էր Ելլադայի մէկ խորհրդաւոր անկիւնը, ուսկից յանկարծ դուրս ցատքեց և ափ մը քաշելու հետ ինկաւ Կրետէի լանջքին վրայ, սուրը շողացնելով:

Մաքնիսական անհուն զօրութեամբ մը, Կրետէի ժայռերը կարծես իրենց քաշեցին աս հերոսը, որ գնաց փակաւ անոնց, մէկ մարմին, մէկ հոգի ձեւացնելով:

Գնէ թէ որ խօսք հասկնար չես գիտեր ի՞նչ լեզու կը խօսի, հին խրթին հիլլեններէ՞ն մըն է զոր դժբախտաբար չեն գիտեր բարձր դիւանագէտները: Խեղճ մարդիկը այնչափ զբաղած են որ ալ ժամանակ չունին լեզուագիտութեամբ պարապելու:

Վասօս՝ իր ժայռին վրայ թառած՝ աշխարհքը կը դիտէ. անշուշտ կը զարմնայ թէ ինչո՞ւ Եւրոպայի վրէժան կը ծեփծեքի կռիւ մը ընելու համար. զարկ զարնուէ՛, և իրաւունքը յաղթականին կը մնայ:

Գէշն ան է որ դիւանագիտութիւն ըստած տգիտութենէն ալ բնաւ չի հասկնար Տիար Վասօս. իր միտքը զանիկայ ըմբռնելու չափ ներքութիւն չունի: Իր գիտցած ու հասկցած գլխաւոր բանն է ընն ինչ թշնամիին վրայ յարձակում, թնդանթի և հրազէնի գործածութիւն և մանաւանդ իր թագաւորէն ընդունած հրամանին կէտ առ կէտ կատարումը:

Եթէ աշխարհիս բոլոր նիւթաւան ու բարոյական ուժերը միանան իր կառչած ժայռէն վանե-

լու համար այս պարմանալի գընդապետը, չեն յաջողիր ի հարկին եթէ շատ նեղը մնայ, ժայռին մէջ կանցնի ու քար կը կտրի: Մէկ մարդ մը կայ և մէկ խօսք մը միայն որ վասօսը կրնան տեղափոխել:

Այդ մարդը Երկիրս թագաւորն է և այդ խօսքը՝ «Ետ եկուր»:

Եւ վասօս՝ սուրը, թնդանթի, հրացանը և ընկերները ժողովելուն պէս անյայտ կըլլայ Կրետէի բարձունքէն:

Բայց ցորչափ այդ խօսքը չի թրթռայ Աթէնքէն մինչեւ Կրետէ, դիւցազն հրամանատարը պիտի անհամարժէ Սօլպէրիի կամ Քըրզընի շաղակրատութիւնները, հանթօի ողորմուկ բարբալանքները և դիւանագիտական ուրիշ ցնորաբանութիւններ: Ինք չի տեսնել կամ չտեսնելու կը պարնէ այն դժոխքները զրահաւորները որոնք շրջապատած են զինքը. անոնց արժէքը կըրեւայ թէ ամենէն աղէկ ինք գիտէ, թէ անոնք իրենց տէրերուն պէս խաբեւայ են ու պոռոտախօս: Եւ թէ չարժեք անոնցմէ վախաւ:

Կատակ ալ չի սիրեր աս մարդը: Անցնալները յիշեալ հսկայ նաւատորմին մէկ քանի մնապարծ սպաններ կը յանդգնին մօտենալ մինչեւ մեր հերոսին կեցած դիրքերը: Վասօս կիմացնէ անոնց որ այցելութենէ չախորժիր, հետեւապէս չայցելեն իրեն. հակառակ պարագային պիտի ստիպուէր հրացանի հարուածներով պատուել զիրենք: Եւրոպացի սպանները, իրենց դիւանագիտութեան պէս փրքուող կարծելով այս սպանաւրիքը, նորէն կերթան. Վասօս, խօսքին տէրը մարդ, հրացանի գընդակներ կը հրամցունէ անոնց քիթին բերնին:

Վասօս քաջ մարդ է. իր երակներուն մէջ լէռնի.ոստի արիւնը կեւոյ: Իր կեցած դիրքին մէջ շատ աւելի բարձր է քան բոլոր քաղաքակիրթ Եւրոպան: Իր լուսաւոր վսեմութեան քով աւելի կը շեշտուին գնուած ու գարշելի մեքենայութիւնները այն թշուառական արարածներուն որոնք ժողովուրդներու ճակատագիրները արամադրելու կոչուած են. իր ասպետական խորիմ կեցուածքին քով՝ օձի գալարումներ են անոնց գաղտագողի, զգոյշ սողոսկողները այն արեան լճակներուն մէջէն որոնց հոսումը չեն ուզեր դադրեցնել:

Այս դարավերջիկ քաղաքակաւութեան անօրէն շահատակները վիժածներ են:

Վասօս՝ բնութեան ամբիժ ու հաւաքատ գաւակն է:

Կեցցէ՛ Վասօս:

Ս.

"ՄԵԾՎԵՐԵԹ"

Օսմանեան արիւնարբու նոր սերունդին մէջ կայ մաս մը, շատ աննշան մաս մը, որ ինքզինքը երիտասարդ թուրքի տիտղոսով պարգարած է, և իրեն նպատակ ընտրած է թրքական արդի բուռնաւոր վարչութիւնը տապալել և անոր տեղ դնել սահմանադրութեան փրկարար դրութիւնը:

Իրաւ է թէ այս երիտասարդ թուրքերը ցարդ ու է կերպով ցոյց տուած չեն կենդանութեան նշան. կը հետեւցուի որ բարոյական գեր մը կը խաղան՝ իրենց մոլեռանդ կրօնակիցներուն բոլորովին նիւթական դործունէութեան քով: Չկարծուի սակայն որ այս անիրաւ թուրքերը մոլեռանդութեան տեսակէտով փար կը մնան իրենց մարդտիրոջ եղբայրներէն. պստիկ կոյրդկաւորին ի գործ կը դնեն այդ երկնային պաշտօնը, անոնք՝ գիտակցաբար:

Առաջինները նախընտրելի են թուրքիոյ այս բարիժողովի երիտասարդութեան օւկանը կը հրատարակուի փարիզի մէջ՝ Մէլլէրէր անունով, Ահմէտ Բիլալ անուն լուսամիտ և ազատախօս օսմանցի մը խմբագրութեան հովանիին տակ:

Այս թերթին վերջին թիւին մէջ, Ահմէտ Բիլալ և Ընկ. Գիւլա, նագիտական տեսութիւններ ըրած են իրենց երիտասարդ թուրքի ակնոցներուն տակէն, տեսութիւններ որոնք արգահատանք կը շարժեն և կը ցուցնեն անուղղայ թուրքի մը բովանդակ յաճառութիւնը: Գաղաքական ընդհանուր տեսութեան մը մէջ զոր ստորագրած է Խալիլ Կանեմ, սա տողերը կան զետեղուած.

«Ի՞նչ է վերջապէս Կրետէի մասին պիտութեանց այս միջամտութիւնն ի նպատակ թուրքիոյ: Պատրուակ մը չէ՞ Սուլթանէն խելու այդ փառաւոր ստացուածքը աւելի բանաւոր չէ՞ր թողուլ օսմ: Կառավարութեան զսպիլ ապստամբութիւնը, ինչպէս ըրած է այնքան անգամներ:»

Երենկ ձեզի, Կանեմ՝ էֆէնտի, որ երիտասարդ թուրքի բովանտակ մոլեռանդութեամբ այն պէս կը կարծէք թէ ձեր կառավարութիւնը տակաւին այն վիճակին մէջ կը գտնուի որ կարենայ զսպիլ ապստամբութիւն մը զոր ինք թեւադրած է անուղղակի կերպով: Ի՞նչ, կուզէք որ բռնութեան լուծը վանելու աղնիւ թափովը դիտուած այդ ժողովուրդը թուրքի հարստահարող բիրտ ուժին տակ ընկնուէր. և նոյն իսկ ենթադրելով որ օսմ: Կառավարութեան ի նպատակ եւրոպական այս միջամտութիւնը թաքուն պատրուակ մը եղած ըլլայ այդ կզգին անշատելու մայր երկրէն, անիրաւութիւն մը գործուած կը սեպուի: Դարա-

ւոր հարստահարութեան մը իրրեւ փոխարինութիւն, Կրետէի տառապեալ ժողովուրդը այլեւս հարկ չէ՞ որ ազատութիւն վայելէ:

Դուք, Կանեմ՝ էֆէնտի, ամեն աղէտի սկզբնապատճառ կը նկատէք արդի արիւր վարչութիւնը. լաւ. նախորդ վարչութեան և նախկին վարչութեանց ատեն թուրքիոյ զանազան գաւառներուն մէջ պակաս էին յաւիտենական հարստահարութիւնները: Այն ատեն ալ պաշտօնապէս կը գործադրուէին անոնք:

Մի այլանէք ուրեմն եւրոպական դիւանագիտութիւնը, եթէ ինչպէս որ դուք կըսէք, հոգի այդ կտորը վարպետութեամբ կը քաշէ կ'ունեն իր բուն տիրոջը ձեռքէն փառք տուէք որ այդպէս փափկութեամբ վարուեցաւ. ի՞նչ պիտի ընէիք, եթէ այնպէս վարուէր ինչպէս որ վարուեցաւ երբ ձեր կրօնակիցները երկու հարիւր հազար հայ խողխողեցին վանդալական վայրագութեամբ:

Մէլլէրէր աղբարայէս և աղգա սիրտաբար կը բողբէ. որ Կրետէի մէջ բրիտանականները ի պլամ կը ջարդեն: Եւ անգլիական նըրբանքներ կը պատմէ: Մինչեւ հիմակ հազար հատ ջարդուեր են:

Բայց Մէլլէրէր կը մոռնայ յիշելու որ անկից առաջ ալ իր պատուարժան թուրք եղբայրները նոյնքան կամ աւելի քրիստոնեաներ կենազրաւ ըրած էին այդ կզգին մէջ. չէ՛, «տին ընդ ական, ատամն ընդ ատամն»: Մանաւանդ որ այդ բանը ապստամբական վիճակի մէջ գործուեր է: Մէլլէրէր խրմբադի էֆէնտին կը մոռնայ որ քրիստոնեայ տարրը ծովածաւալ մթերք մը ունի մարմիններու ուրոնց գլուխները կոծկէն բաժնեցին իսլամական կրօնին հաւատացեալները: Դիտեցէք որ ահագին անջրպետներ կան մեր յիշեալ մթերքին ու ձեր աննշան կորուստին միջեւ:

Հաւատացէք որ անիրաւ բաներ կըսէք:

Ե.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Կ. Պօլիս, 27 Մարտ

Ս. Օրմանեան Դռնէն քանի մը անորոշ խոստումներ առնելով ետ կեցաւ հրաժարելու դիտաւորութենէն. ասոր վրայ իրատէ մը ելաւ տակաւին բանտարկեալ Հայերու արձակումը հրամայող. մաս մը բանտարկեալներ իրօք ազատ ձգուեցան, թէեւ թուրքերը միւս կողմէ ալ կը սպառնան ջարդել ու կը ջարդեն:

Ազգային ամենէն մեծ մտահոգութիւնը Հայ ժողովրդին մէջ տիրող հացի կարօտութիւնն ու հարիւր հազարաւոր որբերը պատապարելու պէտքն է: Վարչութեան կարգադրութեամբ և մաս-

նաւորներու հոգածութեան շնորհիւ Հայաստանէն արդէն սկսած են անտէրունչ մանկիկներ տառ հասնիլ Ազգ. Հիւանդանոցին և հայ անուանեալ յանձնուելու համար լինուանալի են Պատրիարքին այս մասին ցոյց տուած ջանքերը և արքեպիսկոպոսի իր սիրտը կարեկցութեամբ և վշտով համակուած է հայ որբերու համար . նա ցոյց տուաւ որ անխնայ աշխատող մէջ . աշխատութիւնը , որ իր առողջութեան սկսած է սպառնալ , շատ արդիւնաւէտ պիտի ըլլար , եթէ միշտ չբախէր կառավարական արգելքներու :

Անկարելի է տեսնել այստեղ հասնող որբերու խումբ մը ու չարտասուել . ծնողք ու պաշտպանէ զրկուած , քուրճերու մէջ փաթկուած , անգոյն և վախ ալիւն մեզ փոքրիկ արարածներ մանկական աշխուժութիւնը պահած են միայն իրենց աչքերուն մէջ . առնալ որ դեռ իրենց վիճակին դիտակից ըլլալու տարիքին մէջ չեն , կը ժպտին , կը զուարթանան անմիջապէս , կը զերենք շոյող ձեռքերու կը հանդիպին . աւելի տարիքոտներու դէմքին վրայ որոշապէս կը նշմարուին կանխահաս խոհունութիւն և լըլուժիւն . առնալ մէկ , որ իր ընկերներուն մէջ ամենէն տխուրը կ'երեւէր , ուղիցի միտիւթաբէլ ու քաշալերիլ բաղդին հաքուածներուն դէմ դնելու : Պատանին ինձ լուսնիմար մոխր ընկէ յետոյ՝ ըսաւ .

— Մայրս Խորանաթիւնը չընդունելուն համար աչքիս առջիւ կտոր կտոր ըրին . իր վերջին նայուածքը , զոր ինձ ուղղեց , չեմ կրնար հեռացնել մտքէս գիշեր ցորիկ . անհոգ եղէք , ես չեմ կարող յուսահատիլ , մօրս յիշատակը զիս անսկուն պիտի պահէ ամէն պատահականութեանց հանդէպ . պիտի ապրիմ մինչև որ իր վրէժը լուծեմ . այս է կեանքիս նպատակը :

Չկրցի իրեն բան մը պատասխանել , զի սաստիկ յուզուած էի և ինքզինքս շատ տկար ու փոքր կը զգայի գաւառացի անուս պատանին քով որուն ոչ միայն պատասխանը , այլ և ձայնը , շեշտը և շարժումները ճնշող ազդեցութիւն մը ըրին վրաս :

Որբեր ընդունելու և ինամելու գործին մէջ բաղդատարար մեր էանաֆ գասակարգը աւելի պատրաստականութիւն ցոյց կուտայ քան հարուստները . ասոնց մէջ կան այնպիսիներ , որոնց քսակը մինչև հիմայ հանրային գործերու համար գոց մնալէ զատ , այսօր ալ , ազգային այսքան աղէտնեւուն առջիւ տակաւին չուզեր բացուիլ . ասոնք արդէն ոչ հայ են և ոչ մարդ . սակայն նոյն իսկ այն հարուստները որոնք քիչ շատ կուտան ազգին , չեն ուզեր իրենց կարողութեան և ազգ. պէտքերուն համապատասխան զոհողու-

թիւններ յանձն տանել , իրենց մէջ մի փայլուն բացառութիւն կար , և զայն ալ հողին յանձնեցինք հինգ օր առաջ . Ասպետ Ջունգէն էր այն . ազգային և բարեգործական նպատակներու տուած նուէրներէն հետեւեցնելով ամէն մարդ կը կարծէր թէ Ասպետը ամենէն քիչ 50,000 ռուբլի տէր էր . իր մահէն յետոյ միայն խնայանք որ 6-7,000 ռուբլի ունի եկեր :

Ջոնց ընկով նկարագրել յուզարկաւորութիւնը , որ շատ փառաւոր եղաւ մասնակցութեամբ Ս. Ռոմանեանի , հայ-կաթոլիկ և յայն կըլերի , Սլատիսկան գեոպոմոտան և հիւպատոսարանի , ազգ. և օտարազգի նշանաւոր անձերու : Պարտք կը զգամ ի յարգանս իր յիշատակին ի վեր հանել հանգէսին վեհութիւնը որ սովորական չէ այս կարգի թաղման հանգէսներու . ներկայ բաղմութեան դէմքին ու շարժումներուն վրայ յայտնապէս կը տեսնուէր թէ ամեն ոք եկած էր իր վերջին Անկէ՛՛՛՛՛ և ԽՈՐԻՆ յարգանքը մատուցանել հանգուցեալին նշխարներուն . արցունքները որ հոսեցան , չէին նուիրուած ազգականին , անձնական բարեկամին , և ոչ ալ ժառանգորդներուն , որովհետեւ Ջունգ ոչ ազգական և ոչ ալ ժառանգորդ ունէր հանդիսականներուն մէջ , ինքնաբերական էին յարգանք և արցունք և իսկ այն բարեբարին յատկացած , որ իր բոլոր ունեցածը թողուց ազգին և սիրեց զայն իր բոլոր արտով : Եւ ազգը իբր ժառանգորդ ու ազգական ներկայ էր թաղութիւն :

Պատիւ և օրհնութիւն իր յիշատակին :

...

«ԻՐԱՆԻՆԻ»Ի ՊԱՏԱՍԽԱՆԸ

Դիտողի . . . — Ձեր մասնաւոր նամակին հարկ է որ պատասխանեմ հրապարակաւ , վասն զի ուրիշներ ալ ձեզի նման կրնան պէտք ունենալ լուսաւորուելու :

Դուք կը կարծէք որ հակասութեան մէջ ինկած ենք մէկ կողմէն յայտարարելով թէ Թաղ. Խորհրդի անդամներուն միջեւ ծագած անհամաձայնութեան հանդէպ ցարդ չեղած զիբ մը բռնած ենք , իսկ միւս կողմէ ամբաստանելով անգամներէն երկուքը յականջ անուանէ :

Ասկէ աւելի անհիթեթ սխալ մը չէիք կրնար գործել : Անուններ յիշուած են միայն Թաղ. Խորհրդի արձանագրութեան մէջ , զոր կը հրատարակէք եւ որուն հեղինակը եւ պատասխանատունը սակայն միմիայն ինք Թաղ. Խորհուրդն է . այս այնքան պարզ է որ չենք կրնար հասկնալ թէ ինչպէ՛ս պատասխանատուութիւնը խմբագրութեան կ'ուղէք վերագրել . հակոտնեայ է ձեր այս արամաբանութիւնը :

Իսկ եթէ ըսել կ'ուզէք թէ մենք մերժելու էինք հրատարակել Թաղ. Խորհրդի արձանագրութիւնները , ազգ. պիտի վարժուէք մը մեր կողմէն այնքան պատշաճութեան եւ ընկալիւթո-

վորութեանց հակառակ պիտի լինէր , որ ամեն խեղճ մարդ իրաւունք պիտի ունենար մեզ յայնժամ նկատելու իբր կողմակալ եւ կուսակցութեան մը կոյր գործիքը :

Իբր վառնա հրատարակուող ազգ. մի թերթ՝ Խառնակ բարոյական պարտականութիւն մը ունէր գոնէ փոքր տեղ մը յատկացնել Թաղ. Խորհրդի արձանագրութեանց բովանդակութեան , եթէ նոյն իսկ Խորհրդին որոշումները խմբագրութեան տեսակերպերուն եւ կարծիքներուն հակառակ ըլլային . վերջին պարագային մէջ Խորհուրդը քննադատելու մեր իրաւունքը , աւելորդ է ըսել , կատարելապէս անվթար պիտի մնար :

Շատ տխուր բան մը պիտի ըլլար , եթէ մեր երիտասարդութիւնը ամեն խնդիրներու մէջ գոնէ էական կէտերը վերլուծելու , զանազանելու եւ ըստ այնմ դատելու մէջ անընդունակութիւն ցոյց տար ձեզ նման : Բարեբաղդաբար այդպէս չէ եւ կը յուսանք որ նոյն իսկ գուցէ տարբեր կերպով պիտի խորհիք այս տողերը կարդալէ ետք՝ որոնք օգտակար դաս մը պարունակեն ձեզի համար :

Եթէ մեր խմբագրական տեսութեանց մասին ըսելիք մը ունիք , գրեցէք մեզ դէմ յօդուած մը եւ մենք պատրաստ ենք զայն հիւրընկալելու մեր սիւնակներուն մէջ , մեզ վերապահելով անշուշտ ձեզ պատասխանելու իրաւունքը : Նարծիմ թէ չեք կրնար առկէ աւելի ակնհերեւ ապացոյց մը ունենալ մեր անկողմակալութեան :

Կրցի՞ք արդեօք հասկցնել , Յ . Պ .

ԿԻՐԻՏԼԻ ԱՍԸԼԱՐԱ

Գահրաման Կիրիտլիէր . տէօվլէթլէրին սէօղլէրին տիյնէմէյի-նիլ . անլէր էրմէնիլէրի պրտաթ-տըզլարը կիպի սիզիտէ ալտատու-ճազլար :

Տէօվլէթլէր քէնտիլէրին Կիրիտ խրիսթիյանլարըն սատտէթինէ ար-զուքէշ կէօսթէրմէքտէ իսէլէրտէ անլէրէ ինտմայընըլ : 20 սէնէ-տէն պէրու էրմէնիլթան խրիսթիյանլարըն ալնը լիսանը իսթիմալ իտիյօրլար . փազաթ էն սօն էրմէնիլին գաթլընա գատար թիւրքլէրէ միւստատէ իտիյօրլար :

Կիրիտտէ իսլամլարըն ալըլըլ սէպէպի իլէ՛ անլէրի մուհաֆազա իթմէք քէնտիլէրին պիր վազի-ֆէի տալիանէ տտա իտիյօրլար . ինանմայընըլ , թիւրքիստա էրմէնիլէր տահա ալ տըրլար , փազաթ անլէր (տէօվլէթլէր) իսլամլարըն էրմէնիլէրի պիւլա մէրհա-մէթ մահալ իթմէլէրինէ միւստատէ իթտիլէր :

Տէօվլէթլէր սիզէ գարշը իլանը հարպ իթմէքլէ սուլհը մուհաֆա-զա իտէճէյիլ տէմէքտէ տիլլէր . նէրէտէ իմիշ պու սուլհ . անը պօշընա արամալտայըլ «պէօյիւք հիւքիւմտարըն» թահիլը սալթա-նալթընտա

Թիւրքիստան հէր թարաֆըն-տա գանլը սէլլէր ազմադտա օլ-տըլը հալտէ՛ էլան սուլհտան պահա իթմէկէ ճէսալթէթ իտիյօրլար :

Թիւրքիստան թէմամիլէթինէ իսլալէ կէթիլթմէք պէհանէսի իլէ

տէօվլէթլէր սիզին գահրաման-լըզլա բարշտլամըլ օլտըլընըլ պարպարլըլ պօյընտըրաղընա թէք-րար սիզի գօշմայա չալըլմագտա տըրլար :

Թիւրքիստան թէմամիլէթի ի-միշ (.) : Ֆազաթ հանկը տէօվլէթ պուլա ըիւլէթ իթմիշ տիր . ի-թալիտ Մասուլը՝ վէ Ֆրանսա թուրուսը՝ վէ Աւստրիա Հէրսէք-Պօսնայը՝ վէ Ինկիլթէրա Գըպ-ըրըլ վէ վէ Մըսըրը՝ վէ Բուսիա Գարսը , լիտահանը վէ Պաթմալը շու 20 սէնէ գարֆընտա դապթու իսթիլա իթտիլտէն սօնրա՝ թիւրքիստան թէմամիլէթինի իտ-տաա իթմէք պիր ֆահիշէնիլն պիգ-ընտէն պահա իթմէկէ պէնդէր :

Ճէսուլը Կիրիտլիէր . էրմէնիլէրէ գարշը քէնտի հարէքթիլէրի իլէ ընկիլ վէ ըիւլմայ օլան օլ հիւքիւմէթլէրին սէօղլէրինէ ա-լա էհէմիլթէթ վէրմէլինիլ . կէ՛օր-մէյօրմըսըլ քի անլէր Սուլթան իլէ պիլլէշէրէք սիզի թօրա թու-թըյօրլար վէ սիզի վէ էվալտ ու ընալընըլ աճըլգտան էօլտիւրի-յօրլար :

Անլէր զալիմ թիւրքիստա գար-շը սալա իսթիմալ իթմէտիլլէրի մուհալէթի ճէպրիլէթ՝ սէրպէստի-լէթ համիսի օլան Եունանիսթա-նա գարշը իսթիմալ իտէճէքլէր տիր :

Թիւրքլէրին՝ 130,000 էրմէնիլէրի քէստիլլէրի վէ սաղ գալան-լարըն պիր գըսմընը իսքէնէլէր ալթընա սօգտըզլարը , վէ պիր չօգ էրմէնի գատըլլարը ճէֆա-լարտան մատտա սաղ սաղ աթէշ-աէ ևագարզլարը , էվալտլարըն տուվարլարա չարբուպ , գազըզա-տըզլարը վէ պիլլէրէք էրմէնի ֆամիլիսլարըն ճէպրէն իսլամ իթ-տիլլէրի վէ սալըսըլ քիլիսէ , ի-պատէթհանէ վէ մանաստըրլարը մուշտալալտըրալըն էանալէրտէ տէվլէթլէր տօնանմալարընը Սթան-պօլա կէօնտէրմէյուպ , շիմտի Կի-րիտէ կէօնտէրմէքտէ տիրլէր :

Տէօվլէթլէր պու թարաֆիլլիլք իլէ մանէն մահալ օլուպ , թապաա-լարըն հըսսիյաթը վիճտանիլէսի անլէրէ գարշը իստան իթմիշ տիր-համիտէ տօսթ վէ միւթթէֆիգ պու հիւքիւմտարլարըն հագարըլ-լըլը՝ սիզին մուգատտէս տալա-նըլը պիր գաթ տահա թագտիս իտուպ , Սէմանըն ինայէթի սիլահ-լարընըլ իւլէրինէ տալթէթ իտէր :

Տէօվլէթլէր թամահաքնարըլընըն սիզէ թագտիմ իթտիլի օթօնօմիլիլէտտ իտիլիլ , վէ տէլինիլ ան-լէրէ քի՛ սէրպէսդիլթէթ արզուսը իլէ սուսամըլ օլան իլիւն պիր տամլա սու քիֆայէթ իթմէք , վէ պուլու թիւքէնկլէրինիլլին ազըլ իլէ սէօյլէլինիլ քի անլէրէ տահա էյի իշիթտիլէսիլիլ , խարթատա Կիրիտ քիշիւք իսէ տէ , հուգուգ-ճա պէօյիւք օլուպ «էվրոպա իթ-թիֆադը» թապիր օլընան շու մէնֆաալթէրէսդ միւրթէքիլ շիւքթէթէն տահա գուվլէթիլ տիր : Տէօվլէթլէրին սիզէ կէօսթէրտիլի վահշի իտարէ ալթընտա ևաշա-մագտան իսէ , Եունանիսթանըն միւհթէրէմ ոսնճաղընը քէֆին իթ-մէլի թէրճիհ էյլէմէնիլի կէօր-տիւքլէրինտէ , անլէր կէրի չէքի-լէճէքլէր տիր :

(Լ՛Առմէնի)

